

է ձէնինի գաւառական վարչութեան: Էլ-Պիրէն գանուելով Տիրերական լիճի դիմացը, եամ բառը շատ պիտի յարմարէր իր գիրքին, զոր պէտք է շփոթել սակայն այլ Էլ-Պիրէնի (Béerot) մը հետ, որ կը գրտնուի Բեթէլի հարաւակողմը, Երուսաղէմի ճամբուն վրայ: Հոս տեղն է յիշելու՝ որ Բեթէլ կը պատկանէր Հիւսիսի թագաւորութեան ու Յովսեփոս զայն կը դնէ Սամարիոյ և Յուդայի միջև հին բաժանմամբ Անուաթ Պորքայիտի մէջ, որ ներկայացուած է Պուրքայով և որ ամէն պարագայի մէջ Thomsenի Այն Պերքիզը է:

դ.— Ելմադղան.— Ասոր ալ ծայնական հնչումը շատ որոշ է. կարելի է նոյնացնել Ամադեբի հետ, զոր շատեր կ'ուզուէր հրեն Ամմոդեբի, Նապուսի արեւմտեան կողմը: 1922ին պատրաստուած անգղիական սպայակոյտի մէկ քարտէսը Քիւլքիլիէի հարաւ-արեւելքը ցոյց կուտայ Էլմեդին գիւղ մը որ կատարելապէս պիտի պատշաճէր Ելմադղանին՝ եթէ սակայն ճիշտ է ուղղագրութիւնն ու հնչումը:

ե.— Եղբար'ան.— Reisner բառս կարգաց Ազաս Բար'ան կամ Ազոդ Բար'ան, ինչ որ տարակուսելի է: Շատ հաւանական է որ ժողովրդային ստուգարանութեամբ ան այժմու ֆիրուսն է, թուլ Քարմի հարաւը:

զ.— Հագերոդ.— Նկատի առնելով որ Սամարիոյ խեցեղիքներու թուականէն մինչև օրս սահող ժամանակը, շուրջ 2660 տարի, սերունդէ սերունդ այլափոխած է հին անուններու իսկական հնչումները, կարելի է ենթադրել որ Հագերոդը այժմու Աեիրաքն է. բայց այս անունով երկու վայրեր կան Պաղեստինի մէջ. առաջինը Նապուսի հարաւը գտնուող Աեիրահն է իսկ երկրորդը Նապուսի հիւսիսը գտնուող Աեիրաք էլ—Հաբապը:

Հաբապ ԱՐՏԱԻԱԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
(Շարունկէն)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

**ԽԱԼԴԵՐԷՆԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ**

(Շար. Նախորդ Թիւն)

Այսպէս ուրեմն խաղերէնը կապ չունի հայերէնի հետ. և սա մի շատ կարևոր յայտնութիւն է մեզ համար, որովհետև սրանով էլ լուսարանում ենք հայերի ծագումը, նրանց գաղթականութիւնը և խաղերին հետ ունեցած աղբնութիւնը: Հաստատում էլ հաստատուելուց յետոյ հայերը խաղերին համարել են մի ստորցեղ, (չնայած որ խաղերինը աւելի բարձր քաղաքակրթութիւն ունէին քան հայերը). և դրա համար էլ հայերէնի մէջ կազմուել են խալտալեզու, խաղալուր, խաղտախուղտ նախատական բառերը: Այս բոլորը նշանակում են «թանձրախօս, կոշտ ու կոպիտ բարբառով խօսող» և հայերի զէպի խաղերինը տածած արհամարհանքի հետ՝ միաժամանակ ցոյց են տալիս որ հայերէնը և խաղերէն տարբեր լեզուները են:

Սակայն հաստատել թէ խաղերէնը հայերէնի հետ կապ չունի և կամ թէ հնդեւրոպական լեզու էլ է, բաւական է խաղերէն լեզուի գաղտնիքներին թափանցելու համար: Եղել են կարծողներ թէ խաղերէնը ցեղակից է սեմական լեզուներին կամ կովկասեան լեզուախմբին, յատկապէս վրացերէնի կամ ուտիերէնի: Եւ կամ թէ Փոքր-Ասիոյ (Ասիանական) հին լեզուների խմբին է պատկանում: Սակայն այս բոլոր ենթադրութիւնները դիւ կարօտ են ապացոյցի, ուստի և չեն ընդունուած գիտունների կողմից և խաղերէնի ծագման ու ցեղակցութեան վերաբերեալ բոլոր հարցերը մեզ համար մնում են անպատասխանի:

Երբ համեմատում ենք որևէ բնիկ հայերէն բառ հնդեւրոպական նախալեզուեան ձևի և ժառանգակից լեզուների համապատասխան ձևերի հետ, յայտնի կերպով տեսնում ենք ծայնական այն խոշոր զանազանութիւնը որ կայ նրանց և հայերէնի միջև, և այն խոշոր այլափոխութիւնը՝ որին ենթարկուած է բառը հայերէնի մէջ: Օրինակի

համար հայր, քույր, եղբայր, երկու, երեք, ևն. այնպէս այլափոխեալ են նախաւոր հնիս. պրսեր, սեխոր, բիրատ, բիրեւ, դլո, սրլես ևն. ձևերի համեմատութեամբ, որ շատ գծուտը է համոզել մարդկանց թէ նրանք միևնոյն բառերն են: Նոյնիսկ արդի ֆրանս. պեր, սեռ, ֆրեք, դեօ, սրուա ևն բառերը շատ աւելի մօտիկ են վերոյիշեալ նախաձևերին, քան հայերէն ձևերը, որոնք նրանցից ատնուազն 1600 տարի աւելի հին, այսինքն մօտիկ են նախալեզուին: Հայերէնի այսքան մեծ այլափոխութիւնը նոյն իսկ արդէն Գ. դարում, նշան է ոչ հարագատ մի խոշոր տարրի գոյութեան և այդ տարրը պիտի լինի խաղիական ժողովուրդը, որ միացաւ հայերի հետ:

Նախորդ գլխում մենք հասանք այն եզրակացութեան, որ եթէ հայերէն լեզուից դուրս հանենք բոլոր բնիկ (հնդեւրոպական) բառերը, ինչպէս նաև ծանօթ լեզուներից փոխառեալ բառերը (պարսկերէն, յունարէն, ասորերէն ևն), մնացեալը կը լինի Փոքր-Ասիոյ ոչ - հնդեւրոպական լեզուներից + խաղիերէն լեզուից փոխառեալ բառերի համագումարը: Միևնոյն ժամանակ աւելացրինք, որ այդ բառերի մեծագոյն մասը պէտք է լինի խաղիական փոխառութիւններ: Այդ համագումարը բաղկանում է մի քանի հազար բառերից, որոնք մի առ մի յիշել այստեղ աւելորդ ենք համարում: Բաւականանանք քննութեան ատնելով միայն կուրտերական արժէք ունեցող մի քանի բառական խմբեր:

1. ԳՈՅՆԵՐ. —

Մենք տեսանք որ գոյն ցոյց տուող բառերից բնիկ են միայն դեղին և դեղձան. միևնորից պարսկական ծագում ունին աշխէտ, կարմիր, կապոյտ, ճերմակ, սպիտակ, սեաւ և նոյնիսկ գոյն ու երանգ բառերը: Երբայցերէն է բոսոր բառը, արաբերէն է բուժայթ. արզն' (սև), կովկասեան է: Մնում են անծանօթ հետեւեալ բառերը. գորշ, երփն, թոյր, թուխ, լուրջ կամ լուրթ, խած, խարտեաշ, ծաւի, համակ (գորշախայտ), հիր (յակնթագոյն կամ երկնագոյն), ճնդիկ (զուտ սև), շառագոյն (շէկ): — Ենթադրելի է թէ այս բառերի մեծագոյն մասը խաղիերէն է:

2. ՄԵՏԱՂՆԵՐ. —

Նախահայերը մետաղներից ծանօթ էին միայն արծաթին: Միւս մետաղներից անագը վերջրին Ասորեստանցիներից, արոյրը, պղինձը, արճիքը պարսկներից, կլայելը արաբներից, ինչպէս որ աւելի յետոյ շուգունը սուսներից, ցիւզը, նիկելը, ալլումինումը, պլատինը ևն. եւրոպացիներից: Անծանօթ են մնում կապուրը, երկաթը և ոսկին: Այս բառերի համար արուած են զանազան մեկնութիւններ. բայց այդ բոլոր մեկնութիւններն էլ անբաւարար են: Հաւանաբար հայերը յիշեալ մետաղների ծանօթութիւնը և գործածութիւնը խաղիերէնից են վերցրած:

3. ԱՄԱՆՆԵՐ. —

Հնդեւրոպական շրջանից երկու բառ միայն ունինք հայերէնի մէջ ամանեղէնի համար. մէկը աման բառն է, երկրորդը՝ սիկ, որ հայ ժողովրդի մէջ մինչև այսօր էլ իբրև աման գործ է ածուում: Աման նըշանակող միւս բառերից արդու, բաժակ, գրիւ, գոյլ, դորակ, զամբիւղ, քակոյկ, խորգ, կապին, կուժ, ճաւակ, մար, նուագ, շիւ, պայուսակ, սապատ, սկաւառակ, սրուակ, սակառ, սաւտ, սաւտակ, ֆանդուկ, ֆուրձ, ֆսակ, փոխառեալ են պարսկերէնից. — ապուղայ, կաքսայ, սարմալ՝ ասորերէնից. — ափսե, փակեղէք, կաքոս, կալար, կամփակ, կիւարոս, կոնֆ, կոսիւղ, պնակ, սիսլ, սկուսեղ, սսման, սառալսն, ֆուզայ, կսես՝ յունարէնից. — հանապ՝ եւրոպականից. — անծանօթ են մնում հետեւեալները. անօր, գուտ, խաւեակ, խուփ, խբարդեայ, խեցի, ծափ, կտնոյր, կայթ, կարաս, կեռլիկ, կնուն, կուր, հաղազակ, մետուր, պուսուկ, սափուր, առանց հաշուելու այն բոլոր զաւառական բառերը որ գործածական են մեր ժողովրդի մէջ՝ զանազան տեղերում: Այս բառերի մեծագոյն մասը խաղիական փոխառութիւն է կարծում:

4. ՈՍՏԱՅՆ ԱՆԿՈՒԹԻՒՆ. —

Այս արհեստը հին հնդեւրոպացոց արդէն ծանօթ էր. նախահայերը ժառանգել էին նրանցից հիմնել, ասեղն, հեթիւն, ասր,

զեյմն, անգանել, զգեմուլ, զլեաս, օրոց, լոր բառերը. — պարսիկներից ստացան՝ ադասան, ապրիբուս, ասառ, բաբբակ, գասառակ, դերձակ, դիպակ, դրօշակ, կեբպառ, հանգերձ, նախարակ, շապիկ, շար, պասառ, շուկիակ, սնդուս, սրկապան, վերմակ, վարճամակ ևն. բառերը. — ասորիներից՝ անգան, գղաթ, գուրպայ, շուշփայ. — բայց աւելի կարևոր ուստայանկական բառերը մնում են անձանօթ. այնպէս են ազբն, առեչ, բուրդ, բարաբ, գորգ, բել, իլ, ծոպ, կապերս, կարժ, կծիկ, կկել, կկոց, կարել, կիւսել, մանել, շաղամար, ուսայն, սսեձ, սսորի, ևն. Այս բառերի մեծ մասը հայերը ստացել են խալդիներից, ուրիշ խօսքով ուստայանկական կիսկատար արհեստը կատարելագործել են աւելի քաղաքակիրթ խալդիների միջոցով:

5. ԸՆՏԱՆԻՔ. —

Արդէն տեսանք որ հնդեւրոպացոց բնտանեկան կազմակերպութիւնը արական գծի վրայ էր. կնոջ կողմի ազգականները կարեւորութիւն չունէին, զրա համար էլ դրանց յատուկ բառեր գոյութիւն չունէին: Բաժանումից յետոյ հնդեւրոպական ժողովուրդները մասամբ իրենց մէջ, մասամբ ուրիշ ոչ-հնդեւրոպական հարեւանների ազդեցութեամբ կազմեցին իգական ճիւղի համար էլ զանազան բառեր: Հայերէնում, ինչպէս տեսանք, արական գծի ազգականական բառերը մեծագոյն մասամբ հնդեւրոպական են, ինչ. սկսուր, սագր, նու ևն: Ապագայում հայերը ազգականական բառեր փոխ չեն առել օտարներից, բացի պապ և մամ բառերից, որոնց բնիկ հայերէն ձեւերը (հաւ, հանի) կային լեզուի մէջ:

Վերոյիշեալներից դուրս հայերէնի ազգականական բառերի մէջ առանց մեկնութեան են մնում՝ աղջիկ, կոյս, աներ, հոր, քեռի, եղբար, զոհանչ, փեսայ, զաւակ, բոռ, լան, քայրաքոսք, և խնամի բառերը, որոնց մի մասը իգական գծին են պատկանում: Տարակոյս չկայ որ այս բառերը մտել են հայերէնի մէջ խալդիներից փոխառութեամբ:

6. ԳՐՕՄՆԵՐ. —

Հայերէնի ամենաթույլ կողմը գրամական է. այս կարգի բոլոր բառերը փոխառութիւն են կամ պարսկերէնից, կամ յունարէնից և կամ մինչև իսկ ասորերէնից: Միակ բնիկ բառը հայերէնի մէջ արձարն է, որ թէ՛ ընդհանրապէս մետաղն է նշանակում և թէ՛ այդ մետաղով կարուած գրամը: Փոխառեալ բառերից դուրս ունինք բլիճն, նաբարակիս, խերեւեռ, որոնք մանր տեսակի գրամներ են նշանակում և հաւանաբար խալդիական փոխառութիւններ են:

7. ԳՐԱԿԱՆ. —

Բացի ուսանել բառից, չկայ ոչ մի գրական բառ՝ որ բնիկ հայերէն այսինքն հնդեւրոպական ծագումից լինի: Թողնելով օտար փոխառութիւնները, ինչ. դպիր, դպրոց, մասեան, մելան, կաղամար, մագաղաթ ևն. որոնք պարսկերէնից, յունարէնից և ասորերէնից են ծագում, հայերէնի մէջ ունինք մի խումբ ամենասովորական բառեր, որոնք սակայն ոչ մի մեկնութիւն չեն ստացել: Այսպէս են՝ բուրբ, գիր, գիրք, գրել, գրիչ, քանաք, կաձիւն, քեւ, եջ, բնքեռնուլ, գիծ, գծել: Որովհետև հայերը Հայաստան մտած ժամանակ դեռ քաղաքակրթութեան բաւական ստոր աստիճանի վրայ էին, մինչդեռ խալդիները նրանցից շատ աւելի բարձր քաղաքակրթութիւն, զիր ու գրականութիւն ունէին, ուստի հաւանաբար այս բոլոր բառերը հայերը փոխ են առել իրենց նուաճած խալդիներից: Դժբախտաբար հայերը, ինչպէս երևում է, այս բոլորի միայն բառերը ձեռք բերին՝ իբրև օտար արտագրութիւն, իսկ իրենց համար գիր ու գրականութիւն չստեղծեցին, մինչև կ'գար Ս. Մեսրոպը՝ որ յունական և ասորական քրիստոնէական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ կը հրնարէր հայերէն գրերը և հիմ կը գնէր հայկական գրականութեան:

Այն մի քանի բառերը՝ որ յիշեցինք վերևում, մի շատ փոքր թիւ են կազմում այն հազարաւոր բառերի մէջ, որ՝ հայերը խալդիներէլ դարաւոր կենակցութեան ժամանակ փոխ են առել նրանց լեզուից: Չկայ կեանքի որեւէ ասպարէզ, որ չը ներ-

կայացնել խաղերէնի ազգեցութիւնը. մեր բառարանը գրեթէ կէս առ կէս խաղերական է: Սաղերէնի ազգեցութիւնը թափանցել է նոյնիսկ շատ աւելի խորը. խաղերէն լեզուն անձանոթ լինելու պատճառով մենք ճիշտ չենք կարող ասել թէ նա ինչ չափով ազգել է հնդեւրոպական սեռի և երկակի թուր ջնջման հայերէնում, հարմարի պահպանութեան, աշխարհարար յոյնակի կողմակերպութեան, զանազան մասնիկների փոխառութեան ևն: Բայց կարող ենք աւելի վստահօրէն ասել որ հայերէնի ձայնական գրութեան ձևաւորումը ատանձնապէս պարտական ենք խաղերէնի. — հայերէն բաղաձայնների հնդեակ խումբը՝ բազկացած իւրաքանչիւրը երեք անդամից (բ, պ, փ, ևն) ճիշտ իր նմանը ունի կովկասեան լեզուների, յատկապէս վրացերէնի մէջ և հաւանաբար նաև խաղերէնի հետ նոյն է: Նոյնպէս հնդեւրոպական երկար ձայնաւորների ջնջումը հայերէնի մէջ անշուշտ արդիւնք է խաղերէնի ազգեցութեան: Նկատելի է որ մեր գրացի վրացերէն, լազերէն ևն. լեզուներն էլ չունին երկար ձայնաւորներ. բայց աւելի կարևոր է այն հանգամանքը՝ որ խաղերէնն էլ ունէր հայերէնի պէս ե և ե ձայնաւորների տարբերութիւնը, մինչդեռ միւս ձայնաւորների մէջ երանգի և տևողութեան որևէ տարբերութիւն չկար:

Սաղերական փոխառութեանց աւելի կարևոր և աւելի անվիճելի մի շարք են կազմում Հայաստանի աշխարհագրական անունները:

Ամէն մի ազգ որ նուաճում է մի ուրիշ երկիր և ժամանակաւոր կամ մշտական բնակութիւն է հաստատում այնտեղ, այդ երկրի աշխարհագրական անունների հետ վարւում է հետեւեալ ձևով. 1) սովորաբար ամէն մի անուն պահում է անփոփոխ՝ յարմարեցնելով միայն իր լեզուի ձայնական օրէնքներին: Այսպէս՝ թուրքերը տիրելով Հայաստանին, չփոխեցին Ակն, Վան, Չըմըշկաձագ, Երզնկա, Բարբերդ, Կումայրի, Կարս, Չաղաձոր անունները, այլ թուրքերէնի ձայնական օրէնքների համաձայն դարձրին Էկին, Վան, Չիմիշկեգէ, Էրզինկեան, Բայրուրք, Գիւմրի, Ղարս, Չանգեղուր ևն: Նոյնպէս ուսները տիրելով Հայաստանին, չփոխեցին, Շուշի, Էջմիածին, Երեւան,

Գորիս ևն. անունները, այլ պահեցին չնչին փոփոխութեամբ՝ Շուսա, Էջմիաղգին, Էրիվան ևն. նոյն է նաև աշխարհիս բոլոր երկրները համար. հնդեւրոպացիք տիրելով Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկէի, Ամերիկայի զանազան տեղեր՝ պահեցին նախաբնիկների տուած անունները և դրա համար էլ Եւրոպան և միւս երկրները լի են այնպիսի անուններով, որոնց խմաստը անյայտ է:

2. Տիրող ցեղը բնիկ անունները ժողովրդական ստուգաբանութեամբ նմանեցնում և վերածում է իր լեզուի որևէ մի ձևին: Այսպէս թուրքերը ձորովը դարձրել են Չիւրիւխ-սու (փտած ջուր), Օձունը՝ Ուղունլար (Երկարներ), Արագածը՝ Ալակեօղ (խայտակն), Կապանը՝ Ղալիան (կշիռք) ևն:

3. Յաճախ տեղական անունները բնիկների լեզուից թարգմանուում է նորեկների լեզուին. այսպէս՝ Բարինտակ դարձել է Տաւալթի, Ծովքը՝ Դեօլջի, Նորաչէնը՝ Թալաֆենդ, Վաղաւերը՝ Թեղխարաբ ևն:

Այս երեքը աշխարհագրական անունների փոփոխութեան սովորական ձևերն են. քիչ անգամ միայն նորեկները գնում են բոլորովին նոր անուններ. այսպէս Էջմիածինը դառնում է Իւլ-Քիլիսա, Աւետարանոցը՝ Չանախչի, Կարինը՝ Էրզրում, Կումայրին՝ Ալեքսանդրապոլ կամ Աեքնական. և այս յատկապէս այն ժամանակ, երբ նորեկները հիմնում կամ շինում են մի բոլորովին նոր քաղաք կամ գիւղ:

Աշխարհագրական անունների փոփոխութեան այս ընդհանուր օրէնքներից չէին կարող բացառութիւն կազմել նաև հայերը: Ուստի նրանք էլ երբ մտան Հայաստան, բնականաբար պահեցին առհասարակ այն ձևերը՝ որ գործածական էին բնիկների մէջ, լինէին զրանք խաղերներ, թէ ուրիշ մանր մունր ժողովուրդների: Եւ անհ զրա համար էլ ունինք Վան-Բիլայնա, Տոսպ-Տուսպա, Արարատ-Աւարսու: Հայաստանի տեղագրական անունները մենք կարող ենք բաժանել երկու կարգի. 1) այն անունները՝ որոնք ոչ մի մեկնութիւն չունին հայերէնի մէջ. ինչ. Մասիս, Արարատ, Վան, Կարին, Երզնկա, Փարպի, Երեւան, Քանաֆեռ, Տաբե, Փարաֆուր ևն ևն: 2) Այն անունները՝ որոնք ուղղակի մեկնում են հայերէն լեզուով. ինչ. Յանաֆաբերդ, Չաբերդ, Աեսաւակ, Վարազաբոյն, Ծովաֆեղ, Վաղաւեր,

էջմիածին, Սեւ Բար, Ծակբար, Ծնարաղ ևն։ Սրանից դուրս են մնում թուրքերէն եւ ռուսերէն անունները, որոնք բոլորովին նոր չըջանի արդիւնք են, ինչ։ Մոլլադուրսուն, Քեիօբենդ, Ալուչալու, Թայչարուխ, Ալեխանսրապոլ, Ելիզաբետպոլ, Ելենովկա, Սուխոյ Ֆանսան, Սիւեօնովկա ևն։ Արգ՝ առաջին կարգի անունները խաղիական անուններ են և անշուշտ մի օր պիտի գրտնեն իրենց մեկնութիւնը, եթէ խաղիքէն լեզուն երեան գայ։ Ամէն մի փորձ մեկնելու այդ անունները հայերէն լեզուով հակառակ է տրամաբանութեան և առաջուց գատապարտուած է անյաջողութեան։ Բայց երկրորդ կարգի անուններն էլ, թէև արտաքին երևոյթով բոլորովին հայերէն, կարող են սակայն, գոնէ ոմանք, խաղիական բառերի աղճատուած ձևեր լինել, իբրև արդիւնք ժողովրդական ստուգաբանութեան։ Այնպէս ինչպէս Ուզունլար «երկարներ» թուրքերէն բառը էապէս ամենին թուրքերէն չէ, այլ հայերէն Յանն «օձաւէտ» բառի աղաւաղութիւնն է, այնպէս օր. Աեսուրակ, որ մեզ համար բոլորովին հայերէն բառ է, կարող է լինել խաղիական մի որևէ բառի աղաւաղեալ ձևը։ Այս բոլորը կարելի է ճշտել և որոշել միայն այն ժամանակ, երբ երեան կ'գայ խաղիքէն լեզուն, բայց առայժմ խաղիական ազդեցութիւնը այդ կողմից անուրանալի է։

Տեղական յատուկ անուններից յետոյ հարց է բարձրանում անձնական յատուկ անունների մասին։ Հայերէնի անձնական յատուկ անունները կարող ենք բաժանել երկու խմբի։ ա) Զուտ հայերէն անուններ, և բ) Օտարազգի անուններ։ Զուտ հայերէն անունները շատ քիչ են մեր մէջ. այսպէս օր. Հրաչեայ, Հրանդե, Արուսեակ, Վարդիլքեր, Հերրիքնազ, Լուսնբազ, Նորայր, Սկալորդի ևն. ընդհակառակը շատ առատ են օտարազգի անունները. այսպէս՝ պահլաւերէն Արեակ (արջուկ), Երուանդ (ձի), Բագարուս (աստուածատուր), Սպանդարուս (սըրբատուր), պարսկերէն՝ Զիւանցիք (մատաղ առիւծ), Արզուման (փափազող), Զինանգիր (աշխարհակալ), եբրայեցիքէն՝ Սամուել (լըսող Աստուծոյ), Յակոբ (խաբող), Էմմաուուել (ընդ մեզ Աստուած), Գաբրիել (ախոյեան իմ Աստուած), յունարէն՝ Սեփալոս (պսակ), Փիլիպպոս (ձիասէր), Բարսեղ

կամ Վասիլ (թագաւոր), լատիներէն՝ Լեւոն (առիւծ), թուրքերէն՝ Ալլանվերդի կամ Թարվերդի (աստուածատուր), ևն. չենք չիշուս նորագոյն եւրոպական և ռուսական անունները. ինչ. Եղուարդ, Ալքրէս, Միւս, Վալորիա ևն ևն։ Այս բոլորից դուրս կան մի խումբ հայկական յատուկ անուններ, որոնք ոչ մի լեզուով չենք կարող մեկնել. այսպէս՝ Հայկ, Արամ, Արամայիս, Մանուազ, Արա ևն։ Արգ՝ անտեղի չէ կարծել որ այդ անունները նոյնպէս խաղիական փոխառութիւններ են, որին իբրև ապացոյց կարող են ծառայել մի քանի խաղիական անունների բացորոշ նմանութիւնը հայերէնի հետ. ինչ. Արամ, խաղիական այդ նշանաւոր թագաւորի անունը, և Արամ, Մեհուան կամ Միհուաթ, խաղիական մեծագոյն թագաւորի անունը և Մանուազ։ Դժբախտաբար խաղիական անուններից էլ շատ բան ծանօթ չէ մեզ, որպէսզի կարելի լինէր համեմատութիւնները աւելի ընդարձակել։ Բայց այսքանն էլ բաւական է ընդունելու համար որ խաղիական փոխառութիւններ կան նոյնիսկ մեր անձնական յատուկ անունների մէջ։ Այս մասին զօրաւոր ապացոյց է մեր տոհմական անունների ունի վերջաւորութիւնը, որ փոխառեալ է խաղիական ինի ձևից, որով կոչուում են բազմաթիւ խաղիական տեղանուններ. տարակոյս չկայ որ հայ նախարարական տոհմերից շատերը խաղիական ծագում ունին։

Ամփոփելով այս բոլորը, մենք կարող ենք իբրև եզրակացութիւն ասել, որ խաղիքէնի ազդեցութիւնը շատ մեծ է հայերէնի վրայ և անշուշտ շատ աւելի մեծ՝ քան որևէ օտար ազդեցութիւն։ Հայերէնը փոխ առել է խաղիքէնից ոչ միայն իր բառամթերքի մի շատ կարևոր և ստուար մասն, այլ և իր ձայնարանական ու քերականական յորինուածութիւնը, անձնական յատուկ անուններից մի մասը և տեղական անունների ամենախոշոր մասը։ Սխալ չի լինիլ ասել որ եթէ խաղիական արիւնը շարունակուած է ապրել մեր արեան մէջ և խաղիական երկիրը շարունակուած է իր գոյութիւնը Հայաստանում, նոյնպէս և խաղիքէնը շարունակուած է ապրել հայերէն լեզուի ծալքերում, Հայկական շրթունքների վրայ։

ՊՐՈՅ. Հ. ԱՃՍՈՅԱՆ